ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Երևան

05.08.2019թ.
ժամը 16:10

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

Ընդունել ի գիտություն, որ նիստին բացակայում էր գնահատող հանգնաժողովի նախագահ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը, այդ իսկ պատճառով հանձնաժողովի նախագահի լիազորությունները իրականացնում էր ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցին հայտարարելու մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 **31.07.2019թ.** ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն, **«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն և «ՎԼԱԴ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ն /հանդես են գալիս համատեղ գործունեության պայմանագրով/** Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2 **26.07.2019թ**-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը Armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ **m.amiryan@mil.am** էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակցը ուղարկել է վերը նշված փաստաթղթերը՝ որոնց ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվեցին անհամապատասխանություններ, մասնավորապես.

-Մասնակցի կողմից չէին ներկայացվել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիրը(երը) և դրա(նց) հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

01.08.2019թ.ին հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը և գնումների համակարգողը ծանուցեց մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը **/02.08.2019թ./** շտկել վերը նշված անհամապատասխանությունը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը՝ որոնք հանձնաժողովի կողմից ուսումնասիրվելուց հետո գնահատվել են հրավերի պայմաններին համապատասխանող:

05.08.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման չափորոշիչները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին, **«ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ին /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «ՎԼԱԴ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ի հետ/** հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակից և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 16^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Վ.Վահանյան

Գնահատող _____ Գ.Անտոնյան

Գնահատող _____ Հ.Ավետիսյան

Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան